

**Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց Դիլիջանի թիվ 2
մանկապարտեզի տոնական միջոցառմանը**

Ամանորի շեմին գեղեցիկ հանդես էին կազմակերպել նաև Դիլիջանի թիվ 2 մանկապարտեզի աշխատակազմն ու սաները: Մանկապարտեզի երկարամյա ու վաստակաշատ բաժնի վարիչ Գրետա Աթաբեկյանի ղեկավարած կրթօջախն ավանդույթի համաձայն ամեն ինչ շատ ճաշակով ու խնամքով էր կատարել: Ամանորյա այդ հանդեսին երեխաներին հյուր էին գնացել նաև Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը, մարզպետի օգնական Գևորգ Ազատյանը, Դիլիջանի քաղաքապետ Արմեն Սանթրոսյանը, IDEA հիմնադրամի ներկայացուցիչները: Ողջույնի, շնորհավորանքի ու մաղթանքի խոսքերից բացի երեխաները նաև նվերներ ստացան, իսկ IDEA հիմնադրամը մանկապարտեզին որպես ամանորյա նվեր փոխանցեց 1000 եվրո: Երեխաներն էլ իրնց բովանդակալից ծրագրով հանդես եկան և հաճելի պահեր պարգևեցին ներկաներին: